«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Գավառի պետական համալսարանի ռեկտոր,

Իրավաբանական գիտությունների դոկտոր

Հակոբյան Ռ. Խ.

«27» մայիսի 2022 թ.

ԿԱՐԾԻՔ

Առաջատար կազմակերպության՝ Գավառի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի կարծիքը Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևայի՝ «Միխայիլ Տյուլպինի «Տվերի 1762-1823թթ. իրադարձությունների մասին տարեգրության» հասկացութային համակարգի առկայացման լեզվանշանագիտական միջոցները» թեմայով Ժ.02.04-«Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևայի ներկայացրած թեկնածուական ատենախոսությունը նվիրված է XVIII-XIX դարերի ձեռագիր ստեղծագործության՝ Միխայիլ Տյուլպինի «Տվերի 1762-1823թթ. իրադարձությունների մասին տարեգրության» հասկացութային համակարգի վերլուծությանը:

Ատենախոսության թեման արդիական է ինչպես լեզվաբանության, այնպես էլ գրականագիտության տեսանկյունից՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ ատենախոսի ուշադրությունը սևեռված է XVIII դարավերջի և XIX դարասկզբի ձեռագիր ստեղծագործության վրա, որն իրենից ներկայացնում է տվյալ ժամանակահատվածի լեզվական և մշակութաբանական նկարագրի բացահայտման արժեքավոր աղբյուր: Ատենախոսը համակողմանիորեն ուսումնասիրել է «Տվերի 1762-1823թթ.

իրադարձությունների մասին տարեգրության» հասկացութային համակարգը, ինչպես նաև Մ. Տյուլպինի լեզվական անձը:

Ատենախոսությունն ունի հստակ կառուցվածք. բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, օգտագործված գրականության ցանկից, որը ներառում է ինչպես տեսական, այնպես էլ բառարանագիտական աշխատանքներ և էլեկտրոնային աղբյուրներ (ընդհանուր՝ 205 անուն): Ուսումնասիրության ծավալը կազմում է 167 էջ:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի նպատակներն ու խնդիրները, հետազոտության օբյեկտն ու առարկան, մեթոդաբանական, տեսական և աղբյուրագիտական հիմքերը, ձևակերպվում են պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության գլուխների հերթականությունը պայմանավորված է աշխատության նպատակներով և առաջադրված խնդիրներով:

Ուսումնասիրության առաջին գլուխը՝ *«Հասկացույթի և հասկացութային համակարգի ուսումնասիրման հիմնական տեսական խնդիրները ժամանակակից լեզվաբանությունում»*, բաղկացած է արդի լեզվմշակութաբանական տեսության հիմնական թեզերը հետևողականորեն արտացոլող երկու ենթագլուխներից և բացահայտում է «հասկացույթ» և «հասկացութային համակարգ» հասկացությունների ժամանակակից լեզվաբանական ընկալումները: Ատենախոսը ներկայացնում է նաև հասկացույթների և միջհասկացութային կապերի հիմնական տիպաբանությունը:

Ատենախոսության երկրորդ գլուխը նվիրված է *լեզվական անձի հասկացութային համակարգին և վերջինիս արտացոլմանը իդիոլեկտում*, բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում հեղինակը դիտարկում է «իդիոլեկտ» հասկացությունը և փորձում վերհանել նշյալ ժամանակահատվածի և տեղայնացման առևտրական խավի իդիոլեկտին բնորոշ լեզվամշակութաբանական առանձնահատկությունները: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում «Տվերի 1762-1823թթ. իրադարձությունների մասին տարեգրությանը», քանի որ վերջինս, ըստ ատենախոսի, իրենից ներկայացնում է XVIII դարի վերջի – XIX դարի սկզբի լեզվի հիմնական առանձնահատկություններն ամփոփող ձեռագիր ստեղծագործություն:

Երրորդ գլխում՝ *«Տվերի 1762-1823թթ. իրադարձությունների մասին տարեգրությունը»՝ որպես XVIII դարի վերջի – XIX դարի սկզբի լեզվական անձի*

վերակերտման աղբյուր, ներկայացված է նշյալ ստեղծագործության հասկացույթների առկայացման լեզվանշանագիտականը միջոցների վերլուծությունը: Այս գլուխը ևս բաղկացած է երեք ենթագլուխներից, որոնցում բազմակողմանի վերլուծության են ենթարկվում *дом, вода, огонь, дорога* հասկացույթները, ուշադրություն է դարձվում նաև Մ. Տյուլպինի ստեղծագործության հասկացութային համակարգին բնորոշ *жизнь – смерть, свой – чужой* հակադրականություններին: Առկա տվյալներից ելնելով՝ հեղինակը մի շարք հետևություններ է անում Մ. Տյուլպինի՝ որպես XVIII դարի վերջի – XIX դարի սկզբի հանրամշակութային սոցիումի անդամի լեզվական անձի մասին:

Ատենախոսության եզրակացությունում ներկայացված են աշխատանքի հիմնական արդյունքները և եզրահանգումները:

Հարկ է նշել, որ ատենախոսը տիրապետում է թեմային առնչվող տեսագործնական նյութին, ինչի մասին են վկայում կատարված խորքային վերլուծությունը, հիմնավորված եզրակացությունները, ատենախոսության գիտական լեզուն, գրագետ և սահուն շարադրանքը, օգտագործված գրականության ծավալուն ցանկը:

Ուսումնասիրությունը զերծ է տառասխալներից, վրիպակներից:

Գտնում ենք, որ գրախոսման ներկայացված թեկնածուական ատենախոսությունը կարող է իր նպաստը բերել հասկացութաբանության ոլորտի հետագա զարգացմանը: Միաժամանակ, ուսումնասիրությունում առկա են որոշ թերություններ, որոնք ներկայացված են ստորև.

- Ատենախոսության հավելվածներում ներկայացված է հասկացույթների առկայացման միջոցների վերլուծությանն առնչվող լեզվանշանագիտական և լեզվական ծավալուն նյութ: Մեր կարծիքով, անհրաժեշտ էր ի մի բերել և միասնական դարձնել հավելվածների բովանդակությունը՝ ներկայացնելով որ միայն քանակական, այլև բովանդակային վերլուծություն:
- Ե. Ն. Արեֆևան հիշատակում է *ДОМ* հասկացույթը՝ ներկայացնելով վերջինիս վերլուծությունը այն ենթակետերում, որոնք վերաբերում են նշյալ ժամանակահատվածի առևտրական խավի կենսակերպը ներկայացնող հասկացույթներին: Կարծում ենք, որ անհրաժեշտ էր նշյալ վերլուծությունը ներկայացնել *ДОМ* հասկացույթին նվիրված բաժնում՝ տվյալ հատվածում ներկայացնելով միայն հասկացույթների միջև առկա կապերը:

- Հասկացույթների վերլուծությունը ներկայացնելիս՝ ատենախոսը պարբերաբար կիրառում է «ներքին կառուցվածք» տերմինը, սակայն ոչ միշտ է հստակեցվում, թե ատենախոսի կողմից կիրառվող այս տերմինը բնորոշում է հասկացույթը, թե վերջինիս արտահայտչամիջոց հանդիսացող բառային միավորը:

Այսուհանդերձ, Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևայի ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատություն է՝ հիմնված լուրջ տեսական հիմքի, ինչպես նաև հասկացույթների՝ ատենախոսի կողմից իրականացված մանրամասն վերլուծության մասին վկայող գործնական նյութերի ամբողջության վրա:

Ատենախոսության եզրահանգումները մատնանշում են հասկացութաբանության ոլորտում մինչ օրս պատշաճ քննության առարկա չհանդիսացած հասկացութային համակարգի այնպիսի առանձնահատկություններ, որոնք ունեն տեսագործնական կարևոր նշանակություն:

Հատկանշական է, որ սեղմագրի բովանդակությունը ներառում է ատենախոսության հիմնական դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևեվայի՝ «Միխայիլ Տյուլպինի «Տվերի 1762-1823թթ. իրադարձությունների մասին տարեգրության» հասկացութային համակարգի առկայացման լեզվանշանագիտական միջոցները» ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ **Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևան** արժանի է **ժ. 02.04 «Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)»** մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևայի՝ «Միխայիլ Տյուլպինի «Տվերի 1762-1823թթ. իրադարձությունների մասին տարեգրության» հասկացութային համակարգի առկայացման լեզվանշանագիտական միջոցները» ատենախոսությունը քննարկվել է Գավառի պետական համալսարանի օտար լեզուների և գրականության ամբիոնի 20.05.2022 թ. կայացած նիստում:

Քննարկման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

Գրախոսվող ատենախոսությունը իրենից ներկայացնում է ինքնուրույն և ավարտուն գիտական աշխատանք, որը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, ուստի ատենախոսը՝

Եվգենիա Նիկոլաևնա Արեֆևան արժանի է ժ. 02.04 «Սլավոնական լեզուներ (ռուսաց լեզու)» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոս՝ **Միրիբյան Գայանե Աշոտի**
Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի
օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
բանասիրակսն գիտությունների թեկնածու, դոցենտ